

իր Հապէշիստան մուտքին համար: Ժամանակի մը մէջ, ուր հեռաձայն և հեռագիր գոյութիւն չունէին, թերեւս նոյնիսկ սուրհանդակներ, ուրիշ բան չէր կրնար ընել մեր հայ եպիսկոպոսը, եթէ ոչ սպասել երկար ատեն (նուազագոյն երկու ամիս) մինչև հրամանին հասնիլը:

Նոյնպէս՝ դարձին որոշ կ'ըսէ, թէ սպասած է մէնարի երկիրին մէջ կարաւանի մը, անոր ընկերանալու համար:

Ասոնք ցոյց կու տան, թէ այդ 369 օրերը ինչպէս անցած են: Դժբախտաբար ինք այս մասին չէ խօսած և չէ ըսած, թէ իր սպասման օրերուն ինչ ըրած և ինչ տեսած է: Իր գործը կարծես աւելի նօթագրութիւն մըն է, որ յետոյ պիտի ընդարձակուէր նոր խմբագրութեամբ մը:

Դ.

### ԹԻԻԹԻԻՆՃԻԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԾԱՆՕԹՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Յովհաննէս Թիւթիւնճի, ինչպէս տեսնուեցաւ, սոսկ իր ճամբան նկարագրելով բաւականացած է: Իր «պատմութիւն»ը չունի ոեւէ դասաւորութիւն կամ կարգաւորութիւն և հետեւաբար իր հայթայթած տեղեկութիւնները՝ 250 տարի առաջուան Հապէշիստանի մասին, քիչ մը խառնակ են. ուստի՝ կ'արժէ փորձ մը ընել զանոնք շասաւորելու:

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԻՆ.— Յովհաննէս Թիւթիւնճի ո՛չ Եթովպիոյ սահմաններուն և ոչ ալ